



Ծրագիրը ֆինանսավորվել է  
Եվրոպական հանձնաժողովի կողմից



Իրականացնող Հայաստանի  
Երիտասարդ իրավաբանների  
ասոցիացիա



Գործընկեր  
Ինֆորմացիայի ազատության  
կենտրոն

**«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ**

**ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՅՄԱՆ ՔՐԵԱԿԱՆԱՅՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՅՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**Աշխատանքային խումբ՝**

*Կարեն Զադոյան - Աշխատանքային խմբի ղեկավար, ծրագրի ղեկավար*

*Քարլ Ուլբրիխտ- Ծրագրի միջազգային փորձագետ*

*Մարատ Ատովյան - Ծրագրի տեղական փորձագետ*

*Մյուզաննա Սողոմոնյան - Ծրագրի իրավախորհրդատու/բարեփոխումների  
հարցերով համակարգող*

**ք. Երևան 23.08.2014**

## Բովանդակություն

1. Ներածություն
2. Ապօրինի հարստացումը քրեականացնելու միջազգային փորձը
3. Ապօրինի հարստացումը քրեականացնելու հնարավորությունը Հայաստանում
4. Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ
5. Հավելված 1

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2014թ. -ի մայիսի 22-ին ՀՀ Ազգային Ժողովը հաստատեց Հայաստանի Հանրապետության Կառավարության Ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) 2014-2017թթ-ի համար: Ծրագրի 2.3 բաժնում՝ «Մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության արդյունավետ համակարգը» վերառառությամբ, 44-45 էջերում ներկայացված է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվելիք հակակոռուպցիոն քաղաքականությունը, որը պետք է հիմնված լինի կոռուպցիայի դեմ պայքարի նոր վերաիմաստավորված տեսլականի վրա: Գաղտնիք չէ, որ ապօրինի հարստացման քրեականցումը հանդիսանում է կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն միջոցներից մեկը, որի վերաբերյալ Ծրագրում անդրադարձ է կատարվել հետևյալ կերպ.

*«կմշակվեն և կներդրվեն «չհիմնավորված հարստացման», շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտումն ու չեզոքացումը, ինչպես նաև էթիկայի կանոններով սահմանված պահանջների խախտման համար ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն կառուցակարգեր.» (էջ 44):*

*«Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը պարտավոր կլինի հայտարարագրերի չներկայացման, վարքագծի կանոնագրքերի պահանջների՝ ներառյալ շահերի բախման կանոնների, «չհիմնավորված հարստացման» դեպքերի, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների խախտում թույլ տված հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց նկատմամբ իրավական ներգործության միջոցներ կիրառելու առաջարկություններ ներկայացնել իրավասու անձանց կամ մարմիններ:» (էջ 45):*

Ինչպես երևում է վերը նշվածից, ՀՀ Կառավարությունը ձգտում է ապօրինի հարստացման հայեցակարգ մշակել և ներդնել Հայաստանում, սակայն չի սահմանում դրա քրեական բնույթը՝ «քրեականացում» եզրույթը: Այդուհանդերձ, միջազգային հաջողված փորձը վկայում է, որ այն օրենսդրություններում, որտեղ ներդրված է «ապօրինի հարստացում»-ը, այն սահմանված է որպես քրեական արարք, և նախատեսում է քրեական պատժամիջոցներ, սկսած տուգանքների նշանակումից մինչև ազատազրկում:

Ապօրինի հարստացումը քրեականացնելու համար կարևոր է սահմանադրական և օրենսդրական հիմքերի ստեղծումը: Շատ երկրներում մարմնի ստեղծման համար կատարվում են սահմանադրական փոփոխություններ, ինչին հաջորդում է օրենքի կամ Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի ընդունում և նոր միայն, օրենքի հիման վրա, քրեականացվում է ապօրինի հարստացումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս Հայաստանը իրականացնում է սահմանադրական բարեփոխումներ, վստահորեն նշում ենք, որ հասունացել է այն պահը, երբ Հայաստանում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար անհրաժեշտ է քրեականացնել ապօրինի հարստացումը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական այս արարքի դեպքում կարող է գործել «մեղավորության կանխավարկածի» սկզբունքը, այդ մասով նույնպես անհրաժեշտ է փոփոխություններ կատարել «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծում»՝ երաշխավորելով «մեղավորության կանխավարկածի» կանխավարկածի սկզբունքը:

Մույն վերլուծությունը հիմնված է միջազգային փորձի և կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերի ուսումնասիրության վրա և ընդգրկում է հետևյալ հարցերի պատասխանները.

- Ինչպե՞ս է մեկնաբանվում և կիրառվում ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածը<sup>1</sup>:
- Ինչպե՞ս է քրեականացվել ապօրինի հարստացումը և ինչպիսի՞ պատժամիջոցներ են նախատեսվել դրա համար:
- Ի՞նչ ինստիտուցիոնալ միջոցառումներ են կիրառվել ապօրինի հարստացումը քրեականացնելու նպատակով:

Վերլուծությունը ներկայացնում է նաև միջազգային փորձից քաղված դասերը, ինչպես նաև համապատասխան առաջարկություններ՝ Հայաստանում ապօրինի հարստացումը քրեականացնելու կարևորության և անհրաժեշտ միջոցառումների իրականացման վերաբերյալ:

---


<sup>1</sup> ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 31-ին, և ուժի մեջ է մտել 2005 թվականի դեկտեմբերի 14-ին: Հայաստանի Հանրապետությունը հիշյալ փաստաթուղթը վավերացրել է 2006 թվականի հոկտեմբերի 23-ին, և ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին:

## 2. ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Ապօրինի հարստացման սկզբունքը երկար պատմություն ունի, որը ծնունդ է առել 1930-ականներին, երբ Արգենտինայում համապատասխան օրենսդրություն ներդնելու փորձ արվեց: Այդ ժամանակից ի վեր, մեծ արագությամբ աշխարհի մի շարք երկրներ նախատեսեցին նշված սկզբունքը իրենց ներպետական օրենսդրությամբ: Ներկայումս ավելի քան 40 պետություն նախատեսել է այդպիսի օրենսդրական դրույթներ:

*Աղյուսակ 1-ը ցույց է տալիս աշխարհում ապօրինի հարստացումը քրեականացնելու վերաբերյալ օրենսդրության ընդունման աճող տեմպերը.*

Աղյուսակ 1



ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածի (Ապօրինի հարստանալը) համաձայն՝

«Իր սահմանադրությունը և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքները պահպանելու պայմանով՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ որպես քրեական իրավախախտում ճանաչվի ապօրինի հարստացման արարքը, երբ դա կատարվում է դիտավորությամբ այսինքն՝ պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումը, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն հիմնավորել»:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան ապօրինի հարստացումը սահմանող միակ միջազգային իրավական ակտը չէ: Մասնավորապես, «Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Աֆրիկական միության կոնվենցիայի (ընդունված՝ 2003թ.-ին) 4(1)(g) հոդվածը ապօրինի հարստացումը համարում է «կոռուպցիոն գործողություն» և «հանցագործություն», իսկ ապօրինի հարստացման սահմանումը ըստ հոդված 1(1)-ի հետևյալն է.

**«Ապօրինի հարստացումը պաշտոնատար կամ ցանկացած այլ անձի ակտիվների նշանակալից ավելացումն է, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն հիմնավորել»:**

Բացի այդ, «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» միջամերիկյան կոնվենցիան (ընդունված՝ 1996թ.-ին) նույնպես քրեականացնում է ապօրինի հարստացումը:

Ինչպես արդեն նշեցինք, սույն վերլուծության շրջանակներում կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Ստորև ներկայացվում են հատվածներ Արգենտինայի, Հոնկոնգի և Հնդկաստանի օրենքերից, որտեղ նախատեսված են ապօրինի հարստացման քրեականացումը: Հնարավոր է հարց առաջանա, թե ինչո՞ւ են հատկապես ընտրվել այդ պետությունները: Այսպես, վերջիններս թեև ունեն ապօրինի հարստացման հասարակ, սակայն համապարփակ սահմանումներ:

*1. Արգենտինայի Քրեական օրենսգիրք, հոդված 286-րդ, 2-րդ մաս*

«Երբ անձից կպահանջվի հիմնավորել զգալի հարստացման ծագումը իր կամ երրորդ կողմի համար, յուրաքանչյուր ոք, այն թաքցնելու դեպքում կհեռացվի զբաղեցրած պաշտոնից և կազատագրվի 2-ից մինչև 6 տարի ժամկետով, կտուգանվի ապօրինի ձեռք բերված գույքի արժեքի 50-ից մինչև 100 տոկոսի չափով և ցմահ կորակագրվի: Հարստացում կհահամարվի ոչ միայն, երբ անձի եկամուտները կաճեն գումարի և/կամ գույքի ավելացման եղանակով, այլ նաև, երբ անձի պարտքերը չեղյալ կհամարվեն և/կամ պարտավորությունները մարված կհամարվեն: Անձը, ով կպարտակի զգալի հարստացումը, պետք է կրի նույն պատիժը, ինչ որ հանցագործության կատարողը:

*Մաս 3.* Յուրաքանչյուր ոք, որը չարամտորեն կխուսափի օրենքով նախատեսված դեպքերում գույքի հայտարարագիր ներկայացնելու պարտավորությունից, կազատագրվի 15 օրից մինչև 2 տարի ժամկետով և ցմահ որակագրվամբ: Հանցանքը համարվում է կատարված, երբ հայտարարագիր ներկայացնելու մասին պատշաճ ծանուցում ստանալուց հետո անձը օրենքով սահմանված ժամկետում պարտավորությունը չի կատարել: Յուրաքանչյուր ոք, որը չարամտորեն կկեղծի կամ ամբողջությամբ չի ներկայացնի հայտարարագրման ենթակա տվյալներ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կենթարկվի սույն հոդվածի 2-րդ մասում նշված պատժին»:

**Հոնկոնգ** – 1971 թվականին ընդունված «Կաշառքի կանխարգելման մասին» օրենք, հոդված 10-րդ

«1.Յուրաքանչյուր ոք, ով հանդիսանում է կամ հանդիսացել է գլխավոր գործադիր կամ նշանակված պաշտոնյա (Փոփոխված 14, 2003, հոդված 17, 22, 2008, հոդված 4) ա) ում կյանքի կենսամակարդակը ավելի բարձր է իր ներկա կամ նախորդ պաշտոնական աշխատավարձից, կամ բ) ով ունի ֆինանսական միջոցներ կամ գույք, որն անհամաչափ է իր ներկա կամ նախորդ պաշտոնական աշխատավարձին, պարտավոր է դատարանին ներկայացնել բավարար հիմնավորումներ իր կենսամակարդակի բարձրացման և ֆինանսական միջոցների ու գույքի ձեռքբերման վերաբերյալ: Նման հիմնավորումների բացակայության դեպքում, անձը կճանաչվի մեղավոր հանցագործության կատարման մեջ»:

**Հնդկաստան** – 1988 թվականին ընդունված «Հնդկաստանի կոռուպցիայի կանխարգելման մասին» ակտ, հոդված 13-րդ, «Պետական ծառայողի քրեական հակաիրավական վարքագիծ» վերտառությամբ:

(1) Համարվում է, որ պետական ծառայողը թույլ է տվել քրեական հակաիրավական վարքագիծ ... եթե նա կամ նրա անունից ցանկացած անձ տիրապետում է կամ ունի, կամ նրա պաշտոնավարման ժամանակ տիրապետել է գույք, որը իր հայտնի եկամուտի աղբյուրին չի համապատասխանում, և պետական ծառայողը չի կարողացել ներկայացնել բավարար բացատրություն: Այս իրավախախտման համար նախատեսված է պատիժ՝ մեկից մինչև յոթ տարի ազատազրկմամբ՝ տուգանքի նշանակմամբ»:

Որոշ երկրներ օրինակ՝ ընդունել են ապօրինի հարստացման սահմանմանը համապատասխանող օրենսդրություն, սակայն չեն ներառել այս հանցագործության բոլոր տարրերը: Մասնավորապես՝

- **Մինգապուրի** քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածը նախատեսում է, որ եթե պաշտոնատար անձը հարստանում է այն անձի միջոցով, ում հետ նա առնչվություն է ունեցել որպես պաշտոնատար անձ, ապա այն կարող է պատժվել ազատազրկմամբ և տուգանքով:
- **Լիտվայի** քրեական օրենսգրքի 189<sup>1</sup>-րդ հոդվածը նախատեսում է հանցագործություն այն դեպքում, երբ անձին հայտնի էր, որ նա ձեռք է բերել այնպիսի գույք, որը ստացվել էր անօրինական ճանապարհով:
- Նման դրույթ կա **Ռումինիայի** քրեական օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն, եթե անձը ձեռք է բերում կամ իրացնում է որևէ ակտիվ և նրան հայնտի է, որ այդ ակտիվները առաջացել են հանցավոր գործունեության արդյունքում, ապա այդ արարքը պատժվում է 2-ից մինչև 5 տարի ազատազրկմամբ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ապօրինի հարստացման համար քրեական պատասխանատվության ենթարկվելու դեպքում, կիրառվում են պատժի տարբեր տեսակներ, այդ թվում նաև՝

1. Ազատազրկում
2. Ապօրինի ճանապարհով ձեռք բերված հարստության բռնագրավում
3. Տուգանք
4. Վարչական պատիժներ, ինչպիսիք են՝ զբաղեցրած պաշտոնից ազատելը, պետական պաշտոններ զբաղեցնելու կամ պետական պաշտոններում ընտրվելու իրավունքից զրկելը՝ որոշակի ժամկետով կամ մշտապես:

Կան երկրներ, որտեղ նշված արարքի համար նախատեսվում է ազատազրկում՝ տուգանքի նշանակմամբ, իսկ որոշ երկրներում նախատեսվում է տուգանքի բռնագանձում և բացահայտված ապօրինի հարստության բռնագրավում: Ամեն դեպքում, գրեթե բոլոր այն երկրներում որտեղ ապօրինի հարստացումը քրեականացված է, որպես պատժամիջոց նախատեսված է ազատազրկումը, բացառությամբ Չիլիի, Ֆիլիպինների և Ռումինիայի: Այս երեք երկրներում իրավախախտման համար սահմանված պատիժը կապված է գույքի բռնագրավման հետ:


Երկրների երկրորդ խմբում, որտեղ նշված արարքի համար որպես քրեական պատասխանատվություն սահմանված է ազատազրկումը, դրա ժամկետը նախատեսված է մինչև

10 տարի: Որոշ երկրներում պատժի խստությունը կախված է պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնից, իսկ տուգանքների չափը կախված է հայտնաբերված ապօրինի ակտիվների գումարի մեծությունից:

Կարևոր է նշել, որ բոլոր դեպքերում ապօրինի հարստացումը դիտվում է որպես քրեական հանցագործություն: Չկա որևէ օրինակ, որտեղ վերլուծության խնդրո առարկա հանդիսացող արարքը դիտվի որպես վարչական իրավախախտում: Եվ սա բնավ էլ պատահական չէ, քանի որ արարքը իր բնույթով և վտանգավորության աստիճանով պետք է որակվի որպես հանցագործություն: Ուստի, ամենևին արդարացված չէ կիրառել միայն վարչական պատասխանատվություն այդ արարքի նկատմամբ:

*Աղյուսակ 2-ը ցույց է տալիս երկրների կողմից ապօրինի հարստացման դեմ կիրառվող պատժամիջոցների տեսակներն ու դրանց համադրությունը: Յուրաքանչյուր երկրում կիրառվող պատժամիջոցների մանրամասները կցված են հավելված 1-ում:*

Աղյուսակ 2



«Ապօրինի հարստացում» քրեական արարքի տարրերը.

- «Պաշտոնատար անձ». ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի իմաստով՝

(i) նշանակովի կամ ընտրովի ցանկացած անձ, որը մշտական կամ ժամանակավոր հիմունքներով, վարձատրությամբ կամ առանց աշխատանքի վարձատրության որևէ պաշտոն է զբաղեցնում Մասնակից պետության օրենսդիր, գործադիր, վարչական կամ դատական մարմնում՝ անկախ այդ անձի պաշտոնի մակարդակից.

(ii) պետական գործառույթ իրականացնող ցանկացած այլ անձ, այդ թվում՝ պետական գերատեսչության կամ պետական ձեռնարկության համար, կամ որևէ հանրային ծառայություն մատուցող, ինչպես դա սահմանված է Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ, և



ինչպես դա կիրառվում է այդ Մասնակից պետության իրավական կարգավորման համապատասխան բնագավառում.

(iii) որևէ այլ անձ, որը Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ սահմանվում է որպես «պաշտոնատար անձ»: (Հոդված 2)

Որոշ պետություններ «պաշտոնատար անձ» հասկացության համար բավականին ընդարձակ սահմանում են նախատեսել: Այսպես օրինակ, Հնդկաստանում «պաշտոնատար անձ» եզրույթը տարածվում է նաև հանրային շահի համար ծառայող ցանկացած անձի վրա, անկախ այն հանգամանքից, թե արդյո՞ք այդ անձը հանդիսանում է պետական ծառայող և նշանակված է պետության կողմից, թե՛ ոչ: Բուրմանում, օրինակ՝ «պաշտոնատար անձ»-ի նկարագիրը տրված է հետևյալ կերպ. «անձ, որը ծառայել կամ ծառայում է ոչ կառավարական կազմակերպությունում կամ այդպիսի որևէ այլ կազմակերպությունում, որն օգտվում է պետական ռեսուրսներից»:

- **Մեղադրյալի պատասխանատվություն, նաև այն դեպքերում, եթե եկամուտները ստացել են մեղադրյալի հարազատները կամ փոխկապակցված այլ անձինք:**<sup>2</sup>

Օրինակ Բրունեյում, Դար-Էս Սալամում ապօրինի հարստացման դրույթը տարածվում է ցանկացած անձի գույքի վրա «եթե անձը տնօրինում է մեղադրյալի կողմից կամ այլ կերպ իրեն ի պահ հանձնված դրամական կամ գույքային միջոցները, կամ ձեռք է բերել այդպիսի դրամական կամ գույքային միջոցներ որպես նվեր կամ փոխառություն՝ առանց մեղադրյալին փոխհատուցելու»:

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 52-րդ հոդվածը նաև սահմանում է. «Չխախտելով սույն Կոնվենցիայի 14-րդ հոդվածը՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, կարող են պահանջվել այն բանի համար՝ որ ֆինանսական հիմնարկներից, որոնց վրա տարածվում է նրա իրավագործությունը, պահանջի ստուգել հաճախորդների ինքնությունը, խելամիտ միջոցներ ձեռնարկել այն միջոցների սեփականատեր բենեֆիցիարների ինքնությունը պարզելու համար, որոնք դեպոնացված են մեծ ծավալի միջոցներով հաշիվներում, և իրականացնել վերահսկողության առավել խիստ միջոցներ այն հաշիվների նկատմամբ, որոնք փորձում են բացել, կամ որոնք վարվում են նշանակալից պետական լիազորություններով օժտված կամ նախկինում օժտված անձանց, նրանց ընտանիքների անդամների և նրանց հետ սերտորեն կապված գործընկերների կողմից կամ վերաթվարկյալ անձանցից որևէ մեկի անունից: Վերահսկողության այդպիսի առավել խիստ միջոցները խելամիտ չափով պետք է կոչված լինեն բացահայտելու կասկածելի գործառնությունները՝ դրանց վերաբերյալ իրավասու մարմիններին տեղեկատվություն տրամադրելու նպատակների համար, և որևէ օրինական հաճախորդի հետ գործեր վարելու առումով դրանք չպետք է մեկնաբանվեն իբրև ֆինանսական հիմնարկներին խոչընդոտող կամ արգելող»:

<sup>2</sup> Տե՛ս «Ապօրինի հարստացման քրեականացումը կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով» զեկույց, Համաշխարհային Բանկ, 2012թ.

- **Պաշտոնավարման ընթացքում և պաշտոնավարումից հետո նախատեսվող քրեական պատասխանատվություն**

Որոշ երկրներ սահմանափակում են ապօրինի հարստացման համար պատասխանատվություն սահմանող նորմի գործողության ժամկետը, մասնավորապես՝ այն գործում է միայն պաշտոնատար անձի պաշտոնավարման ընթացքում: Այդուհանդերձ, այստեղ առկա է լուրջ վտանգ, քանզի ձեռք բերված կանխօրոք պայմանավորվածության շրջանակներում պաշտոնատար անձը շատ հանգիստ կարող է ստանալ ապօրինի ճանապարհով ձեռք բերված եկամուտները իր վստահված անձից՝ պաշտոնավարումից հետո: Ըստ այդմ, որոշ երկրներում (ինչպես օրինակ՝ Արգենտինա, Կոլումբիա և Պանամա) սահմանվում է, որ այսպիսի հանցագործության համար քրեական պատասխանատվություն սահմանող նորմը կիրառելի է պաշտոնատար անձի պաշտոնավարումից հետո՝ մինչև 5 տարվա ընթացքում:

- **«Նշանակալից»**

«Ակտիվների նշանակալից ավելացում» եզրույթը հստակ սահմանում չունի: «Նշանակալից» -ը համեմատվում է օրինական եկամուտի հետ: Հաճախ օգտագործվում է նաև մեկ այլ՝ **«անհամաչափ»** եզրույթը: Կարծում ենք, սխալ քաղաքականություն է հրապարակայնորեն հայտարարել այն նվազագույն շեմը, որից ցածր դեպքերը քրեորեն չեն հետապնդվելու և չեն դիտվելու որպես ապօրինի հարստացում, քանի որ կա մտավախություն, որ այս դրույթը կարող է դիտվել որպես փոքր չափի կոռուպցիայի համար պատասխանատվությունից ազատելու միջոց: Մակայն իրականությունն այն է, որ եթե օրինական եկամուտը գերազանցող ակտիվների չափի գերազանցումը ընդամենը մարզինալ է, ապա դժվար կլինի ապացուցել, որ այդ ակտիվները ապօրինի ճանապարհով են ձեռք բերվել: Հետևաբար խելամիտ կլիներ որպեսզի քրեական հետապնդման մարմինը այս հարցի վերաբերյալ ներքին ուղեցույց ունենա:

- **«Ակտիվներ»**

Սա հաճախ լայնորեն սահմանվում է, որպես անձին պատկանող ակտիվների ընդհանուր արժեքի փոփոխություն, այդ թվում պարտքերի մարում (չեղյալ հայտարարում), ինչպես նաև ունեցվածքի ուղղակի աճ: Օրենսդրությունը երբեմն վկայակոչում է «կենսամակարդակին» կամ «ապրելակերպին», սակայն դրանք հիմնականում հետաքննություն սկսելու խթանիչ հանգամանքներ են, այլ ոչ թե՝ հանցագործության տարրեր:

- **«Ղիտավորությամբ»**

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածը սահմանում է, որ ապօրինի հարստացումը պետք է քրեական արարք ճանաչվի, եթե այն կատարվում է Ղիտավորությամբ: Իսկ Ղիտավորությունը կարող է բացահայտվել գործին առնչվող փաստերից: Օրինակ՝ գումարներ ստանալու նպատակով, մեղադրյալը կարող էր ունենալ բանկային հաշիվ, որից պետք է պարբերաբար օգտվել ֆինանսական միջոցները օգտագործելու համար, կամ փաստաթղթեր ստորագրեր գույք ձեռք բերելու համար, և այլն: Իրավախախտումը խիստ պատասխանատվություն սահմանող իրավախախտում չէ: Եթե մեղադրյալը կարող է ապացուցել փաստի վերաբերյալ իր չիմացությունը, այդ դեպքում մեղադրանքը անհիմն է:

Օրինակ, գումարները կարող են սխալմամբ փոխանցված լինել անձի բանկային հաշիվներին՝ առանց վերջինիս գիտության:

### **Անմեղության կանխավարկածի կիրառման հիմնախնդիրները**

Ակադեմիական գրականության մեջ երկար ժամանակ քննարկվել և խնդրո առարկա են հանդիսացել այն հարցերը, թե՛

1. արդյո՞ք ապօրինի հարստացման քրեականացումը կխախտի անձի անմեղ լինելու կանխավարկածը՝ մինչև նրա մեղավոր լինելու փաստը ապացուցելը, և եթե այո,
2. արդյո՞ք արդարացված է բացառիկ դեպքերում այս կանխավարկածի խախտումը:

Որոշ երկրներ, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ը, հրաժարվել են ապօրինի հարստացումը քրեականացնելուց, ելնելով մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներից: Այլ երկրներում, ինչպես օրինակ՝ Հոնկոնգում, դատարանները որոշել են, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտումը արդարացված է գործի հանգամանքներից ելնելով, իսկ Արգենտինայի դատական գործերում չեն կարողացել ապացուցել այն հանգամանքը, որ օրենքը խախտում է երկրի սահմանադրությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Սալաբյակուն ընդդեմ Ֆրանսիայի (1988) գործում նշել է «փաստի կամ օրենքի կանխավարկածները (ենթադրությունները) գործում են յուրաքանչյուր իրավական համակարգում»: Դատարանը վճռեց, որ «պետությունները պետք է սահմանափակեն կանխավարկածները ողջամիտ սահմաններում, որոնցում հաշվի է առնվում խնդրո առարկայի կարևորությունը և պահպանվում պաշտպանության իրավունքը»: Այս սկզբունքը ապօրինի հարստացման արարքի նկատմամբ կիրառելիս, կարող է արդարացնել մեղադրյալի վրա ապացուցման բեռի պարտականությունը դնելը, այն հիմնավորմամբ, որ իրավախախտման ծանրությունը արդարացնում է իրավական սկզբունքների այս տեսակի խախտումը, և այն պահանջը, որ մեղադրյալը պետք է բացատրի այդ հանգամանքներում իր եկամուտների աղբյուրները, համարվում է ողջամիտ:

Դեռևս հայտնի չեն այնպիսի դեպքեր, երբ ապօրինի հարստացումը քրեականացնելու նպատակով, որևէ երկրի սահմանադրության մեջ կատարվել են համապատասխան լրացումներ և փոփոխություններ: Ավելին, այն երկրներում, որտեղ ընդունվել է ապօրինի հարստացումը քրեականացնելու վերաբերյալ օրենսդրություն, առկա է եղել քաղաքական ընդհանուր համաձայնություն:

### **Ընթացակարգային հարցեր. ապացույցների աղբյուրները**

Ապօրինի հարստացման քրեական հետապնդումը հիմնավորող ապացույցները կարող են ձեռք բերվել բազմազան աղբյուրներից: Շատ հաճախ, ապացույցը ձեռք է բերվում մեկ այլ հանցագործության քննության ժամանակ (օրինակ՝ այս պրակտիկան Հնդկաստանում կազմում է ապօրինի հարստացման գործերի ավելի քան 50%-ը): Այլ դեպքերում, կոնկրետ ապօրինի հարստացման պրո-ակտիվ քննությունը կարող է ապացույցներ տրամադրել որոշակի գործիքների միջոցով, ինչպիսիք են գույքի և եկամուտների հայտարարագրերի ուսումնասիրությունը, կենսամակարդակի աճի դինամիկան, ինչպես նաև հասարակության կողմից ներկայացված բողոքների բնույթն ու քանակը:

- **Եկամուտների և ակտիվների բացահայտում**

Պաշտոնատար անձանց գույքի և ակտիվների բացահայտման վերաբերյալ տրամադրված տեղեկությունը կարող է հետաքննություն սկսելու հիմնական աղբյուր հանդիսանալ, չնայած որոշ երկիրներում միայն նման տեղեկատվության առկայության արդյունավետությունը այնքան էլ մեծ չէ: Օրինակ՝ Արգենտինայում ապօրինի հարստացման գործերի վարույթի ընդամենը 4%-ն սկսվում գույքի և եկամուտների հայտարարագրերի ուսումնասիրությունից ստեղծված արդյունքների հիման վրա: Նման տեղեկությունների օգտակարությունը որոշակիորեն պայմանավորված է նրանով, թե արդյո՞ք նախատեսված են վարչական կամ քրեական պատժամիջոցներ եկամուտների մասին տեղեկություն չտրամադրելու, կամ կեղծ, թերի կամ ապակողմնորոշիչ տեղեկություններ տրամադրելու համար: Մեկ այլ խնդիր է, թե ինչպե՞ս են նման հայտարարագրերը վերլուծվում: Որպես ընդհանուր կանոն, **ընդունված է մանրամասն վերլուծվել բարձր ռիսկայինություն պարունակող մի քան դեպքերը, քան՝ բոլոր հայտարարագրեր ենթարկել մակերեսային վերլուծության:** Նման մակերեսային մոտեցման հետևանքով ստացված տեղեկությունները չեն կարող հանդիսանալ իրավական հիմք՝ ապօրինի հարստացման դեպքերը քննելու համար:

- **Ապրելակերպի ստուգումներ - ընդունված ընթացակարգեր. Տեղեկատվություն հայտնող անձանց պաշտպանություն**

Ապրելակերպի ստուգումները հաճախ հարուցվում են հիմնվելով որևէ ՀԿ-ից, կամ հասարակության անդամի կողմից ստացված բողոքի վրա, կամ լրատվամիջոցներում տպագրված հայտարարության արդյունքում: Այսպիսով, կարևոր է ունենալ մի համակարգ, որը խրախուսում է հավաստի դիմում-բողոքները և խտրականության դրսևորումներից պաշտպանում տեղեկատվություն հայտնող անձանց: Այս կապակցությամբ, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 33-րդ հոդվածը, **«Տեղեկատվություն հայտնող անձանց պաշտպանությունը»** վերտառությամբ, սահմանում է.

«Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի իր ներքին իրավական համակարգի մեջ բոլոր անձանց որևէ անարդարացի վերաբերմունքից պաշտպանության ապահովման համար պատշաճ միջոցներ ներառելու հնարավորությունը, ովքեր բարեխղճորեն և խելամիտ հիմքերով իրավասու մարմիններին հայտնում են այն իրավախախտումների հետ կապված փաստերի մասին, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան»:

Ապրելակերպի ստուգում անցկացնելիս սուբյեկտիվ մոտեցումից խուսափելու համար, ավելի լավ է աշխատել ընդունված գործառնական ընթացակարգերի հիման վրա: Այս դեպքում հետազոտվելու ենթակա բոլոր հարցերի մանրամասն ցանկը ապահովում է, որ պաշտոնատար անձի մասին կազմված ամբողջ տեղեկությունը հնարավորինս համապարփակ և օբյեկտիվ բնույթ կրի:

- **Կասկածելի գործարքների մասին հաշվետվություններ (հաղորդումներ) (այսուհետ՝ ԿԳՀ-ներ)**

ԿԳՀ-ները օրենքով սահմանված կարգով փողերի լվացման դեմ պայքարելու մեթոդ է, ըստ որի՝ բանկերը և այլ կազմակերպություններ պարտավոր են իշխանություններին հաղորդել հաճախորդի ձեռնարկած կասկածելի գործարքների մասին: Այս տեսանկյունից նշենք, որ ԿԳՀ-ների միջոցով տրամադրված ապացույցները կարող են նաև արժեքավոր լինեն ապօրինի

հարստացման գործերով հետաքննությունների ժամանակ, այն դեպքերում, երբ հաշվեհամարի սեփականատերը պաշտոնատար անձ է:

- **Ապօրինի հարստացման դեպքերում քննության և քրեական հետապնդման հատուկ ինստիտուցիոնալ դրույթներ**

Միջազգային փորձը տարաբնույթ պատկերացում է տալիս այն հարցի վերաբերյալ, թե արդյո՞ք հարկավոր է ապօրինի հարստացման հետ կապված գործ հարուցելու իրավունքի հատուկ ինստիտուցիոնալ դրույթներ լինեն: Որոշ երկրներում ապօրինի հարստացմանը վերաբերվում են, ինչպես ցանկացած այլ հանցագործության, և այն ընկնում է պետական մեղադրողի ընդհանուր ենթակայության տակ: Այլ երկրներում ապօրինի հարստացումը հնետաքննելու և քրեորեն հետապնդելու իրավունքը տրված է որոշակի մարմնի (օրինակ՝ անկախ հակակոռուպցիոն մարմնի): Երկու դեպքում էլ ապօրինի հարստացման դեպքի առնչությամբ գործ հարուցելու իրավունքը կարող է սահմանափակվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց շրջանակով, որի իրավասությունը տրված է քրեական հետապնդման ծառայությանը կամ անկախ հակակոռուպցիոն մարմնին, որը բխում է հանցագործության զգայուն բնույթից:

Հոնկ Կոնգի փորձը ցույց է տալիս, որ նոր առանձնացված հատուկ մարմնի ստեղծումը, որը ժամանակի ընթացքում անհրաժեշտ քննչական լիազորություններ է ձեռք բերել, կարող է էական դրական ազդեցություն ունենալ ապօրինի հարստացման գործերը քննելու և քրեորեն հետապնդելու հաջողության տոկոսի բարձրացման վրա: Նախ, նոր մարմին ստեղծելու առավելությունը կայանում է նրանում, որ կարելի է հավաքագրել այնպիսի մասնագետներ, ովքեր ունեն կամք և կարողություն նպաստելու կոռուպցիայի դեմ պայքարին, և որոնք ունեն հաջողված հակակոռուպցիոն փորձառություն: Երկրորդ, այդ մասնագետները կարող են հմտացվել հակակոռուպցիոն գործեր քննելու իրենց ունակությունները և ձեռք բերել բարձր մակարդակի փորձագիտական հմտություններ: Մյուս կողմից, եթե նման գործերը վարվում են ոստիկանության կամ դատախազության կողմից, առկա է վտանգ, որ դրանք արդեն կայացած ինստիտուտներ են, ու արդյունքում երկուսն էլ կարող են քաղաքական ճնշման առարկա հանդիսանալ, այդ տեսանկյունից ոստիկանության կամ դատախազության մարմիններին նման գործառույթ վերապահելը չի կարող գործել արդյունավետ: Ընդ որում, անգամ այն դեպքում, երբ դատախազության կառուցվածքում առկա լինի առանձնացված հակակոռուպցիոն ստորաբաժանում: Նման օրինակ է հանդիսանում Արգենտինան, քանի որ դատախազության կազմում մի քանի տարի հաջողությամբ և արդյունավետ գործում էր առանձնացված հակակոռուպցիոն ստորաբաժանում այնքան ժամանակ, քանի դեռ Գլխավոր Դատախազը որոշեց սահմանափակել ստորաբաժանման լիազորությունները, ինչի հետևանքով ստորաբաժանման ղեկավարը հրաժարական տվեց:

Եթե որոշում ընդունվի, որ բոլոր կոռուպցիոն բնույթի գործերով, այդ թվում ապօրինի հարստացման գործերով, հետաքննություն պետք է իրականացնի ոստիկանությունը, ապա այդ դեպքում արդեն իսկ ոստիկանությանը վերապահված կլինի հետաքննություն անցկացնելու ամբողջական լիազորությունը: Մյուս կողմից, եթե որոշում ընդունվի, որ կոռուպցիոն բնույթի գործերով հետաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ է ստեղծել առանձնացված մարմին, ապա կարևոր է, որ այդ մարմինը օժտված լինի հետաքննություն իրականացնելու ամբողջական լիազորությամբ: Հակառակ դեպքում, քրեական գործի վարույթի շրջանակներում

փաստեր և ապացույցներ հավաքելու այդ առանձնացված մարմնի հնարավորությունը խիստ կիսաչնդոտվի: Այսպիսի լիազորությունները պետք է նաև ենթադրեն մեղադրյալի և նրա բարեկամների ու փոխկապակցված այլ անձանց ակտիվները սառեցնելու պահանջ ներկայացնելու հնարավորություն:

- **Միջգերատեսչական համակարգում**

Անկախ այն հանամանքից թե արդյոք կատեղծվի հակակոռուպցիոն մասնագիտացված մարմին թե՛ ոչ, միշտ էլ անհրաժեշտություն կլինի այլ պետական գերատեսչությունների հետ արդյունավետ համակարգված փոխգործակցություն, և հատկապես այնպիսի գերատեսչություններ, որոնք պատասխանատու են եկամուտների և գույքի մասին հայտարարագրերի վերլուծության, ինչպես նաև հարկային և մաքսային իշխանությունների հետ, ֆինանսական հետազոտությունների ստորաբաժանման, գույքի և այլ ռեզիստրների հետ: Որպեսզի համակարգումը արդյունավետ լինի, հակակոռուպցիոն մարմինը կամ ստորաբաժանումը պետք է այլ պետական գերատեսչություններից տեղեկություններ պահանջելու լիազորություններ ունենա նաև: Օրինակ Սինգապուրում, 1952թ.-ին հիմնադրված հակակոռուպցիոն մարմինը բավականին թույլ էր, և միայն 1959թ.-ին երբ վերանայված օրենսդրությամբ նրան լրացուցիչ քննչական լիազորություններ վերապահվեցին, որն ավելի արդյունավետ աշխատելու հնարավորություն ընձեռեց մարմնին:

### **Եզրակացություններ միջազգային փորձի վերաբերյալ**

Մինչև այսօր ապօրինի հարստացման քրեականացման վերաբերյալ օրենսդրություն ընդունած երկրների մեծ մասը կազմում են Ասիայի, Աֆրիկայի և Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի զարգացող երկրները: Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի զարգացած երկրներից ոչ մեկը այդպիսի միջոցներ չի ունեցել, սակայն կարելի է պնդել նաև, որ այդ երկրները նման օրենսդրություն ընդունելու կարիք էլ չունեն, քանի որ ընդհանուր առմամբ այնտեղ կոռուպցիայի մակարդակը ցածր է:

Ապօրինի հարստացման վերաբերյալ օրենսդրություն ընդունած ոչ բոլոր երկրներն են դա հաջողությամբ արել, որոշ դեպքերում, կոռուպցիան չի էլ նվազել: Ինչպես կարելի է տեսնել վերը նշված վերլուծությունից, ապօրինի հարստացման քրեականացման վերաբերյալ օրենսդրության ստեղծումն ու իրականացումը բարդ (համալիր) գործընթաց է: Հաջողությունը կախված մի շարք գործոններից, այդ թվում՝

- Օրենսդրության որակից:
- Իրավախախտումները քննելու և հետապնդելու միջոցառումների համակարգ, ներառյալ՝
  1. Ակտիվների և եկամուտների հայտարարագրման համակարգի բազմակողմանիություն և ամբողջականություն:
  2. Հետաքննչական մարմնի լիազորություններ:
  3. Հետաքննչական մարմնի աշխատակազմի բարձր որակավորում:
  4. Հետաքննչական մարմնի անկախություն:
  5. Պետական տարբոր մարմինների միջև տեղեկատվության փոխանակման հոսք:

Հոնկոնգում, Արգենտինայում, Հնդկաստանում և Պակիստանում, պաշտոնատար անձինք հավատում են, որ ապօրինի հարստացման քրեականացումը կոռուպցիայի դեմ պայքարում

օգտակար գործիք է: Հոնկոնգի փորձը, մասնավորապես ցույց է տալիս, որ եթե առկա են կառուցակարգեր ու ռեսուրսներ, այդ դեպքում ապօրինի հարստացման համար քրեական հետապնդումը կարող է հաջողության բարձր մակարդակ ունենալ: Նախկին Խորհրդային Միությունում և Արևելյան Եվրոպայում օգտակար դասեր կարելի է քաղել այնպիսի երկրների փորձից, ինչպիսիք են՝ Մակեդոնիան, Լիտվան, Ռումինիան և Մոլդովան, որոնք ընդունել են ապօրինի հարստացման վերաբերյալ օրենսդրություն կամ նմանատիպ դրույթներ: Այդ երկրներից ոչ բոլորն են հաջողությամբ պայքարում կոռուպցիայի դեմ: Օրինակ՝ Մոլդովային քննադատում են օրենսդրության իրականացումը ձախողելու մեջ:

Այդուհանդերձ, միջազգային ցուցիչների վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ երկրներ բարելավել են իրենց հակակոռուպցիոն վարկանիշը: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության Կոռուպցիայի ընկալման ցուցիչը հայտնի լավագույն վարկանիշային համակարգերից մեկն է, և որոշ երկրների արդյունքներ տրված են աղյուսակ 3-ում:

### Աղյուսակ 3

Երկիր	Ապօրինի հարստացման վերաբերյալ օրենսդրության (կամ նմանատիպ օրենսդրության) ընդունման տարեթիվը	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության վարկանիշային միջին գնահատականը նախքան օրենսդրության ընդունումը	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության վարկանիշային միջին գնահատականը օրենսդրության ընդունումից հետո
Լիտվա	2010	4.75	5.3
Չիլի	1999	6.9	7.22
Չինաստան	1997	2.3	3.5

Մեկ այլ՝ միջազգայնորեն ընդունված գնահատման համակարգ է Համաշխարհային բանկի Համաշխարհային կառավարման վեց ցուցիչները, որոնք գնահատվում են 5 տարին մեկ անգամ (2002թ., 2007թ. և 2012թ.): Յուրաքանչյուրից մեկը «Կոռուպցիայի վերահսկում» է: Ինչպես երևում է աղյուսակ 4-ում, ապօրինի հարստացման վերաբերյալ օրենսդրություն կամ նմանատիպ օրենսդրություն ունեցող մի շարք երկրներ այս ցուցիչի համաձայն դրական միտում են ցուցաբերել:

### Աղյուսակ 4

	«Կոռուպցիայի վերահսկում» կառավարման համաշխարհային ցուցիչ (Համաշխարհային բանկ)		
Երկիր	2002	2007	2012
Արգենտինա	37	41	39

Չիլի	92	90	91
Չինաստան	34	33	39
Հոնկոնգ	93	94	93
Լիտվա	60	58	66
Մակեդոնիա	24	45	59
Մալազիա	62	67	66
Ռումանդա	39	58	73

Տեղեկատվության համար նշենք, որ Հայաստանի վարկանիշը երեք տարիների համար համապատասխանաբար եղել է 34, 29 և 37:



### 3. ԱՊՕԲԻՆԻ ՀԱՐՍՏԱՅՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- **Հայաստանի գործող օրենսդրություն**

Ներկայումս, Հայաստանը չունի ապօրինի հարստացման հարցին վերաբերող օրենսդրություն, չնայած

Միանալով ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիային, Հայաստանի Հանրապետությունը չի քրեականացրել Կոնվենցիայի 20-րդ հոդվածով նախատեսված արարքը՝ ապօրինի հարստացումը, այսինքն չի ընդունել պարտավորություն քրեականացնելու պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումը, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն հիմնավորվել վերջինիս կողմից:

Այսպես, «ՀՀ քրեական օրենսգիրք» ՀՕ-528 օրենքն ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ից, և «ապօրինի հարստացումը» որպես քրեորեն պատժելի արարք, չի նախատեսվել:

Թեև, ինչպես նշվեց սույն փաստաթղթի ներածական մասում, ՀՀ Կառավարությունը իր 2014-2017թթ-ի ծրագրում նախատեսել է մշակվել և ներդրվել **«չհիմնավորված հարստացման»**, շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտումն ու չեզոքացումը, ինչպես նաև էթիկայի կանոններով սահմանված պահանջների խախտման համար ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն կառուցակարգեր:

Հայաստանի Հանրապետությունում ընդունված է նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը<sup>3</sup>: Նշված հանցատեսակի քրեորեն պատժելի լինելու նորմը նախատեսված է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի շրջանակներում՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (փողերի լվացումը)» վերտառությամբ: Փողերի լվացման վերաբերյալ օրենսդրությունը իր հատկանիշներով նման է ապօրինի հարստացումը քրեականացնող օրենսդրությանը, քանի որ երկու հանցատեսակների դեպքում էլ օրենսդրությունը շեշտը դնում է եկամուտի օրինականության վրա: Քանզի, հնարավոր է անձին ենթարկել քրեական պատասխանատվության փողերի լվացման համար՝ առանց ապացուցելու վերջինիս մեղավորությունը քրեական այլ հանցագործության կատարման մեջ:

- **Առաջարկվող բարեփոխումներ**

Ուսումնասիրելով ապօրինի հարստացումը քրեականացնելու միջազգային լավագույն փորձը, հիմք ընդունելով միջազգային պայմանագրերի նորմերը և հաշվի առնելով Հայաստանի իրավական համակարգին բնորոշ առանձնահատկությունները, առաջարկում ենք՝

- կատարել փոփոխություն «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծում»՝ ապօրինի հարստացման քրեականացման համար նախատեսելով «մեղավորության կանխավարկածի» սկզբունքը.

<sup>3</sup> «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2008 թվականի մայիսի 26-ին և ուժի մեջ է մտել 2008 թվականի օգոստոսի 31-ին:

- քրեական օրենսգրքում կատարել փոփոխություն և ապօրինի հարստացումը քրեականացնել.
- ապօրինի հարստացման քրեականացումից հետո, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը և քրեաիրավական պատիժը խստացնող օրենքի հետադարձ ուժի կիրառման արգելքի սկզբունքը, օրենքով սահմանել, որ ապօրինի հարստացման քրեական պատասխանատվությունը առաջանում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարած իրավախախտումների վրա.
- ապօրինի հարստացման եկամուտների շրջանակը պետք է ընդգրկի նաև հարազատների և փոխկապակցված այլ անձանց տիրապետության տակ գտնվող ակտիվները.
- ապօրինի հարստացման համար նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն անձին ազատազրկելու, ապօրինի ճանապարհով ձեռք բերված եկամուտների բռնագրավման և/կամ տուգանքի բռնագանձման, վարչական պատիժների (զբաղեցրած պաշտոնից ազատելը, պետական պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի ժամկետով կամ մշտապես պետական պաշտոններում ընտրվելու իրավունքից զրկելը) կիրառման տեսքով.
- անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել և Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում սահմանափակել կանխիկ դրամի շրջանառությունը.
- համակարգային միջոցառումները պետք է կատարվեն այնպես, որպեսզի ապօրինի հարստացման գործերի հետաքննությունը և նախաքննությունը կատարվի մեկ մարմնի կողմից:

- **Համակարգային միջոցառումներ**

Ապօրինի հարստացման քրեականացմանը ուղղված համակարգային միջոցառումների շրջանակներում պետք է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Անկախ հակակոռուպցիոն մարմնի ստեղծում, որը հիմնված կլինի Հոնգ Կոնգի և Մինգապուրի նման երկրներում մշակված հաջողված մոդելների վրա և պետք է ունենա հետևյալ երեք հիմնական գործառույթները՝ ա) կոռուպցիոն գործերի, ներառյալ ապօրինի հարստացման գործերի քննություն, բ) կանխարգելիչ հակակոռուպցիոն քաղաքականության և պրակտիկայի (կոռուպցիոն սխեմաների վերլուծության/բարեփոխումների), գ) բնակչության շրջանում կոռուպցիոն խնդիրների ընկալման և իրազեկության բարձրացմանը ուղղված կրթական ծրագրեր: Անկախ հակակոռուպցիոն մարմնի՝ Կոռուպցիայի դեմ պայքարի բյուրոյի (այսուհետ՝ բյուրո) հայեցակարգը մանրամասն մշակվել է առանձին փաստաթղթով: Հակիրճ, բյուրոյի հիմնական ասպեկտները հետևյալն են.

- Բյուրոն կստեղծվի օրենքի ուժով կամ հնարավոր է Սահմանադրությանը համապատասխան:
- Բյուրոն անկախ կլինի քաղաքական ճնշումից, կունենա Ազգային ժողովի կողմից հաստատված տարեկան բյուջե, որի առնչությամբ տարեկան հաշվետվություններ կներկայացնի ԱԺ-ին:

- Բյուրոն կգլխավորի տնօրենը և իր գործառույթները իրականացնելու համար կունենա մցունակ, բարձր վարձատրվող աշխատակազմ:
  - Կոռուպցիոն գործերը քննելու նպատակով բյուրոն օժտված կլինի հետաքննության (հիմնված է Ինդոնեզիական մոդելի վրա) և նախաքննության մարմին հատուկ լիազորություններով, և կունենա արհեստավարժ մասնագետներով հագեցած մասնագիտացված բաժին, որի աշխատողները կընտրվեն հիմնվելով նրանց մասնագիտական գիտելիքների, նվիրվածության և բարեխղճության վրա:
2. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի (էթիկայի հանձնաժողով) փոխակերպումը անկախ, բազմանպատակային հակակոռուպցիոն մարմնի՝ Բյուրոյի, որը կունենա վերևի թիվ (1) կետում նկարագրված Բյուրոյի կարգավիճակը, կառուցվածքը և լիազորությունները: Փոփոխությունները կարող են կատարվել աստիճանաբար կամ մեկ համալիր բարեփոխման միջոցով:
  3. Ապօրինի հարստացման գործերի քննության իրականացումը Հատուկ քննչական ծառայության կամ նորաստեղծ Քննչական կոմիտեի ապօրինի հարստացման գործերի քննության ստորաբաժանման կողմից:

### **Իրականացման ենթակա քայլեր**

Ապօրինի հարստացումը քրեականացնելու համար անհրաժեշտ կլինեն ձեռնամուխ լինել հետևյալ քայլերի իրականացման վրա.

1. Կատարել փոփոխություն «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծում»՝ ապօրինի հարստացման քրեականացման համար նախատեսելով «մեղավորության կանխավարկածի» սկզբունքը: Քրեական օրենսգրքում կատարել փոփոխություն և ապօրինի հարստացումը քրեականացնել: Ապօրինի հարստացման քրեականացումից հետո, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը և քրեաիրավական պատիժը խստացնող օրենքի հետադարձ ուժի կիրառման արգելքի սկզբունքը, օրենքով սահմանել, որ ապօրինի հարստացման քրեական պատասխանատվությունը առաջանում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարած իրավախախտումների վրա: Ապօրինի հարստացման համար նախատեսված պատժամիջոցներ սահմանել ազատազրկումը, ապօրինի ճանապարհով ձեռք բերված եկամուտների բռնագրավումը, տուգանքի բռնագանձումը, վարչական պատիժների (զբաղեցրած պաշտոնից ազատելը, պետական պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի ժամկետով կամ մշտապես պետական պաշտոններում ընտրվելու իրավունքից զրկելը) կիրառումը:.
2. Ընդլայնել գույքի և եկամուտների հայտարարագրեր ներկայացնող պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների շրջանակը:
3. Ընդլայնել գույքի և եկամուտների հայտարարագրեր ներկայացնող պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձանց շրջանակը:
4. ՀՀ ֆինանսաների նախարարության կազմում ստեղծել ստորաբաժանում, որը կհամակարգի, կվերլուծի և կհամադրի պաշտոնատար անձանց գույքի և

եկամուտների հայտարարագրերը և ներկայացված տեղեկատվությունը:

5. Միջոցներ ձեռնարկել և Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում սահմանափակել կանխիկ դրամի շրջանառությունը:
6. Համակարգային միջոցառումները պետք է կատարվեն այնպես, որպեսզի ապօրինի հարստացման գործերի հետաքննությունը և նախաքննությունը կատարվի մեկ մարմնի կողմից:
7. Ինստիտուցիոնալ դրույթների վերաբերյալ օրենսդրության մշակում. սա կախված կլինի ինստիտուցիոնալ մոդելի ընտրությունից: Եթե, պետք է ստեղծվի անկախ մարմին՝ Բյուրո, ապա Բյուրոյի կառուցվածքը, գործունեությունը, լիազորությունները պետք է կարգավորվեն առանձին օրենքով:
8. Ապօրինի հարստացման գործերի քննության ստորաբաժանման համար ընդհանուր գործառնական ընթացակարգերի մշակում:

*Ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության կառուցվածքի նախագծի.*

- «Արդյունավետ պայքար կոռուպցիայի դեմ» Գլուխ 2-ը լրացնել հետևյալ նոր բովանդակությամբ «Հակակոռուպցիոն իրազեկում և կրթություն» և «Կոռուպցիայի քրեականացումը և իրավապահ գործունեությունը» կետերով: «Կոռուպցիայի քրեականացումը և իրավապահ գործունեությունը» կետում անհրաժեշտ է, որ տեղ գտնի կոռուպցիայի դեմ պայքարի այնպիսի արդյունավետ միջոց, ինչպիսին է «Ապօրինի հարստացման քրեականացումը»:
- «Արդյունավետ պայքար կոռուպցիայի դեմ» Գլուխ 2-ի 2.2. Օրենսդրության կատարելագործում և օրենսդրական բարեփոխումների բաժնում նախատեսել դրույթ, համաձայն որի Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը պարտավորություն է ստանձնում հակակոռուպցիոն ոլորտում գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, այդ թվում Եվրոպական Միության օժանդակությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը իրականացնող կազմակերպությունների՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի և գործընկեր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ շարունակել համատեղ աշխատանքները սույն վերլուծության «Ապօրինի հարստացումը քրեականացնելու հնարավորությունը Հայաստանում» բաժնում արված առաջարկությունների հիման վրա մինչև 2016թ.-ի հուլիս ամիսը մշակել և պաշտոնական շրջանառության մեջ դնել «Ապօրինի հարստացման քրեականացումը Հայաստանում» հայեցակարգը:

#### 4. ዐዳህግጠናው ላይ ጥናታዊና ጥናታዊ ስራዎች ላይ ለጥናታዊ ስራዎች ያሉኑ

1. “On the Take – Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption”, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger, World Bank, 2012.
2. “The accumulation of unexplained wealth by officials: making the offence of illicit enrichment enforceable”, Maud Perdriel-Vaissiere, U4 Anti-Corruption Resource Centre, 2012.
3. “An exception to the rule? Why Indonesia’s Anti-Corruption Commission succeeds where others don’t – a comparison with the Philippines’ Ombudsman”, Emil P. Bolongaita, U4 Anti-Corruption Resource Centre, 2010.
4. “Investigation and Prosecution of Corruption: Bribery, Illicit Enrichment and Liability of Legal Persons” – Proceedings of the Regional Seminar, Batumi 2012, OECD
5. “Criminalizing and Prosecuting Illicit Enrichment in Corruption Cases”, Mesay Tsegaye Meskele, [www.abysinnialaw.com](http://www.abysinnialaw.com)
6. “Specialised Anti-Corruption Institutions – Review of Models”, OECD, 2008
7. “Anti-Money Laundering and Combating the Financing of Terrorism – Armenia” Moneyval Mutual Evaluation Report, September 2009.

**Հավելված 1**

Հավելված 1-ում ներկայացված է սույն վերլուծության շրջանակներում ուսումնասիրության առարկա հանդիսացած երկրների իրավական ակտերի ընդունման տարեթվերը, ինչպես նաև նախատեսված պատժատեսակները՝ ապօրինի հարստացման համար:

Երկիր կամ տարածք (միավոր)	Օրենքի ընդունման տարի	Արարքի համար նախատեսված պատիժ		
		Ազատազրկում	Տուգանքի բռնագանձում և/կամ եկամուտի բռնագրավում	Տուգանքի չափը ԱՄՆ դոլարով
Ալժիր	2006	2-10 տարի	200 հազարից - 1 միլիոն դինար	2.500-12.500
Անտիգուա և Բարբուդա	2004	Մինչև 5 տարի	100 հազար Արևելյան Կարիբյան դոլար գումարած եկամուտների վճարում	2.700
Արգենտինա	1964	2-6 տարի	Եկամուտի 50-100%	
Բանգլադեշ	2004	3-10 տարի	Բռնագրավում	
Բոլիվիա	2010	5-10 տարի	200-500 Դիաս գումարած բռնագրավում	29 - 145
Բրունեյ	1982	7 տարի	30 հազար բրունեյի դոլար գումարած եկամուտների վճարում	24.300
Չիլի	1999	Նախատեսված չէ	Եկամուտների չափին համարժեք տուգանք	
Չինաստան	1997	Մինչև 5 տարի	Եկամուտների բռնագրավում	
Հոնկ Կոնգ	1971	3-10 տարի	100 հազարից – 1միլիոն Հոնկոնգյան դոլար գումարած եկամուտների վճարում	13.000
Կոլումբիա	2004	8-15 տարի	Եկամուտների կրկնակի չափի տուգանք	
Կոստա Ռիկա	2004	3-6 տարի	-	
Կուբա	1987	2-5 տարի կամ տուգանք	300-1000 պետ տուգանք գումարած եկամուտների	300-1.000

			բռնագրավում	
Էկվադոր	1987	2-5 տարի	Եկամուտների կրկնակի չափի տուգանք	
Եգիպտոս	1975	Ժամկետ սահմանված չէ	Եկամուտների չափին համարժեք տուգանք	
Էլ Սալվադոր		3-10 տարի	-	
Եթովպիա	2004	Մինչև 5 տարի	Գումարը չի նշված	
Գարոն	2003	2-6 տարի	2միլիոնից - 20 միլիոն Կենտրոնական աֆրիկյան ֆրանկ	4.100-41.000
Գայանա	1998	6 ամսից - 3 տարի	Եկամուտի 1.5 չափին հավասար տուգանք	
Հնդկաստան	1988	1-7 տարի	Գումարը չի նշված	
Ջամայկա	2003	1-5 տարի	Մինչև 5 միլիոն Ջամայկյան դոլար	45.000
Լոսոտո	1999	5-10 տարի	5 հազարից-10 հազար մալոտի	471-942
Մակեդոնիա	1996	1-8 տարի	Տուգանքի չափը չի նշված: Եկամուտների բռնագրավում	
Մադագասկար	2004	6 ամսից - 5 տարի	50 միլիոնից - 200 միլիոն Մալագասյան ֆրանկ	20.500-82.000
Մալավի	1995	12 տարի	-	
Մալազիա	1997	14 օրից - 20 տարի	Եկամուտի գումարի հնգապատիկը	
Մեքսիկա	2003	3 ամսից - 14 տարի	Օրական նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկ տուգանք	
Նեպալ	2009	Մինչև 2 տարի	Եկամուտների չափին համարժեք տուգանք գումարած եկամուտների բռնագրավում	
Նիկարագուա	2008	3-6 տարի	-	
Պակիստան	1999	Մինչև 7 տարի	Տուգանք (գումարը չի նշված) գումարած եկամուտների բռնագրավում	
Պանամա	2008	3-12 տարի	-	

Պերու	1991	5-18 տարի	-	
Ռուանդա	2003	2-5 տարի	Եկամուտի արժեքի 2-ից 10 պատիկը	
Մենեգալ	1981	5-10 տարի	Եկամուտի արժեքի 1-2 ապատիկը	
Սիեռա Լեոնե	2008	Առնվազն 3 տարի	30 միլիոն լեոնեից ոչ պակաս	6.900
Ուգանդա	2009	Մինչև 10 տարի	Մինչև 240 արտարժույթի կետ	
Վենեսուելա	-	3-10 տարի	-	
Արևմտյան ասիայի և Գազայի հատված	2005	Ժամկետ սահմանված չէ	Եկամուտների չափին համարժեք տուգանք գումարած եկամուտների բռնագրավում	